# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թ. ապրիլի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի IV^ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թերեզա Սամսոնյանը:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Միջոցառման կազմակերպում:

2.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին. <<Շունն ու կատուն>> ստեղծագործության բեմականացման կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ դպրոցում ավանդույթ է դառձել << Հեքիաթին հյուր>>խորագրով միջոցառման կազմակերպումը: Այս կիսամյակում IV^ա դասարանում որոշել է կազմակերպել միջոցառում: Քանի որ այս տարի լրանում է Հովհաննես Թումանյանի <<Շունն ու կատուն>> ստեղծագործության 130 ամյակը, առաջարկություն էր եղել բեմադրել այդ ստեղծագործությունը: Դասղեկը նշեց, որ արդեն սովորողներին բաժանել է համապատասխան դերերը: Դպրոցը տրամադրել է բեմական հագուստներ: Անհրաժեշտ է ծնողների աջակցությունը դահլիճի բեմը կահավորելու համար:

1.Որոշեցին. Միջոցառումը ցուցադրել մինչև ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում և ձեռք բերել անհրաժեշտ նյութեր բեմի կահավորման համար:

2.Լսեցին. Ընթացիկ հարցեր:

Ելույթ ունեցավ դասղեկը՝ ներկայացնելով երեխաների սանիտարական

վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների

գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատ-

մամբ: Հիշեցրեց, որ հունիսի սկզբին երեխաները պետք է հանձնեն գիտելիքների ստուգում մայրենից /թելադրություն/ և մաթեմատիկայից ԳԹԿ-ի կողմից ուղարկված նմուշին համապատասխան: Դասղեկը հորդորեց, որ ծնողներն ավելի ուշադիր լինեն իրենց երեխաների ուսման հարցում:

Որոշեցին՝ Լինել հետևողական, որպեսզի երեխաները պատշաճ կերպով ներկայանան գիտելիքների ստուգմանը և բարձր ցուցանիշներով այն հանձնեն:

Ծնող. խորհրդի նախագահ՝ /Լ. Թադևոսյան/

Քարտուղար՝ /Լ. Պապյան/